

ՏԻՖԼՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մարտության Մ.Կ.

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Ասատրյան Ս.Ա.

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի տիֆլոմանկավարժության բաժնի երկրորդ կուրսի մագիստրոս

Հանգուցային բառեր և հասկացություններ. տեսողական պատկեր, չտեսնող, տիֆլոգրաֆիկա, համակարգչային ծրագիր, բրայլյան համակարգ, ուսումնական գործընթաց, կարողություն և հմտություն, աուդիոգիրք:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալականացման և հարմարեցման խնդիրներն այսօր համարվում են առավել արդիական:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթադաստիարակչական գործընթացում կիրառվող մանկավարժական ավանդական մոտեցումները թեև լուծում են բազային գիտելիքների, կարողությունների և հմտությունների արդյունավետ ձևավորման խնդիրը, սակայն դրանք ամբողջությամբ չեն նպաստում նրանց հարմարեցմանը ներառական կրթության պայմաններին:

Հայտնի է, որ կրթության գործընթացում տեխնիկական միջոցների կիրառումը նպաստում է տեսողության խանգարումներ ունեցող երե-

խաների անձի ձևավորմանը, գործունեության տարբեր ձևերում նրանց ընդգրկմանը և այլն [2,3.6]:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը ՀՀ-ում տարեցտարի ավելանում է, սակայն, ցավոք, պետք է փաստենք, որ գրեթե ոչ մի դպրոց չունի ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար ինչպես կրթության, այնպես էլ տեղաշարժման մատչելի պայմաններ: Համաձայն «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի»՝ 2013 թվականին իրականացրած հետազոտությունների [7]՝ ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար առանձնահատուկ դասասենյակային պայմանների, հարմարեցվածությամբ որևէ դպրոց աչքի չի ընկնում:

Այդ խնդրի լուծման արդյունավետ քայլերից մեկը ուսումնական գործընթացում տիֆլոտեխնիկական միջոցների ներդրումն է: Նշված հիմնախնդրի հրատապությունը նշել

են մի խումբ գիտնականներ/ Վ.Պ. Գուդոնիս, Ն.Դ.Շմատկո, Ն.Ն.Մալոֆեն, Լ.Վ.Գոդովնիկովա և այլք/:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության գործընթացում տիֆլոտեխնիկական միջոցների կիրառումն ունի կարևոր նշանակություն, այն ընդլայնում է մանկավարժների աշխատանքային հնարավորությունները, նպաստում է աշակերտների հարմարեցմանը ուսուցման պայմաններին, բարձրացնում է նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը, ակնկալվող նպատակներին հասնելու արագությունը, ստեղծում է արդյունավետ գործունեության հնարավորությունը:

Տիֆլոտեխնիկական միջոցների մշակման և ուսումնական գործընթացում դրանց կիրառման հիմնական առանձնահատկությունը տեսողության խանգարում ունեցող մարդկանց պահպանված զգայարանների հնարավորությունների հաշվառումն է:

Դիտարկենք տիֆլոտեխնիկական մի քանի միջոց, որոնք նպաստում են ուսուցման գործընթացում ուսումնական նյութի լիարժեք ընկալմանը: Որպես չտեսնողների ուսուցման գործընթացի համար նախատեսված հատուկ հարմարանք՝ առանձնանում է բրայլյան գրիչ-գրամեքենան, որը, մեր կարծիքով, դպրոցահասակ չտեսնող երեխայի ուսուցման գործընթացում առաջին անհրաժեշտության հարմարանքն է: Որքան էլ տեխնիկական զարգանա, ստեղծվեն խոսող ծրագրեր, գիրք կարդացող փոքրիկ տեսախցիկ-սկաներներ, ձայնագրիչներ և այլն, դեռևս ոչ մի

այլ հարմարանք չի ստեղծվել, որը կփոխարինի Լուի Բրայլի այս գյուտին. սրանով է չտեսնող երեխան գրել սովորում, պատկերացնում տառ հասկացությունն ընդհանրապես: Չէ որ համակարգչի մեջ այն գրելով՝ նա միայն լսում է տվյալ տառի հնչյունային արտաբերումը, սակայն տառը նյութականանում է տեսնելու, իսկ այս պարագայում՝ շոշափելու շնորհիվ: Ցանկալի կլինի, որ բրայլյան տառերը սովորելուն զուգընթաց՝ երեխան շոշափի նաև տառի իրական տեսքը: Ահա այստեղ է, որ լիարժեք օգնության է հասնում տիֆլոգրաֆիկան:

Ուսուցման գործընթացը հեշտացնելու և գրելու կարողությունն ավելի արագ ձևավորելու համար կիրառվում են նաև բրայլյան տպամեքենաները: Սա առավել պարզեցնում է գրելու մեխանիկական գործընթացը. այն հարմարավետ է, և աշակերտը շուտ չի հոգնում գրելուց: Բրայլյան տպամեքենան ունի վեց ստեղն, որոնք համապատասխանում են բրայլյան համակարգի վեց կետերին, ինչպես նաև՝ բացակի, տողի փոխման և մեկ վանդակ հետ գալու ստեղններ:

Չտեսնողների ուսուցման գործընթացում կարևոր դեր ունեն նաև աուդիոգրքերը, որոնք կարելի է գործածել հայոց լեզվի, գրականության, օտար լեզուների դասաժամերին: Դրանց միջոցով չտեսնող անձինք կարող են ունկնդրել նաև գեղարվեստական գրքեր: Նշենք, որ արդեն մի քանի տարի է, ինչ ստեղծվում են հայերեն թվային աուդիոգրքեր, որոնք կարելի է գտնել նաև համացանցում: Անհատ մարդիկ և կազմա-

կերպություններ և ծայնագրում են աուդիոգրքեր՝ նախապատվությունը տալով գեղարվեստական և սոցիալ-հասարակական, իրավական, օրենսդրական, մասնագիտական գրականությանը (ՀՀ օրենսգրքեր, կոնվենցիաներ և այլն):

Թե՛ դպրոցական, թե՛ բուհական ուսուցման գործընթացում չտեսնողներն օգտագործում են ծայնագրիչներ: Մինչև թվային ծայնագրիչների ի հայտ գալը՝ գործածվում էին մագնիսական ժապավենով ծայնագրիչները: Սակայն դրանք չտեսնողների ոչ միայն սահմանափակ հնարավորություններ էին ընձեռում, այլև անհարմար էին՝ ծայնագրության որակի և սահմանափակության պատճառով: Թվային ծայնագրիչներն անհամեմատ պարզեցրեցին չտեսնողների ուսումնական գործընթացի կազմակերպումը: Եթե ժապավենների վրա կատարված ծայնագրության միջոցով ձեռք բերած տեղեկատվությունն անհրաժեշտ էր կրկնակի մշակման ենթարկել (օրինակ, գրել բրայլյան համակարգով, որպեսզի ծայներիզը կրկին գործածվեր), ապա թվային ծայնագրիչով կատարված ծայնագրությունը միանգամից կարելի է փոխադրել համակարգիչ, մոնտաժել, պահել համակարգչում կամ գրել խտասկավառակների վրա, ինչը, բնականաբար, անհամեմատ հարմար տարբերակ է և կարևորը՝ ապահով:

ԱՄՆ-ի և Եվրոպայի կրթական հաստատություններում լուրջ ուշադրություն է դարձվում չտեսնողների համակարգչային գիտելիքների ձեռքբերմանն ու կարողությունների զարգացմանը: ՀՀ-ում այն իրա-

կանացվում է միայն Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում, քանի որ մեր հանրապետությունում այն միակ կրթօջախն է այս երեխաների համար: Դեռևս 2-րդ դասարանից այստեղ ուսուցանվում է «ԱՐԵՎ» համակարգը, որը չտեսնողների համար ստեղծված միակ հայկական արտադրության խոսող ծրագիրն է: Սրա միջոցով երեխաները կատարում են հիմնական գործողություններ՝ տեքստի մուտքագրում, խմբագրում, տեքստի ընթերցում, օգտվում են երաժշտական գրադարանից, նաև որոշ չափով կարող են օգտվել համացանցից:

Չտեսնողները գործածում են նաև այլալեզու այլ ծրագրեր՝ Jaws-ը և NVDA-ն: Ի դեպ, NVDA-ի շնորհիվ արդեն հնարավոր է աշխատել նաև հայալեզու ծրագրով. մուտք գործել հայկական կայքեր, աշխատել հայերեն տեքստերի շուրջ և այլն: Ամենևին չթերագնահատելով հայկական արտադրության «ԱՐԵՎ» համակարգը և մեծ ակնածանքով վերաբերվելով այն ստեղծողներին՝ պետք է նշել, որ Jaws-ն ու NVDA-ը ընձեռում է չտեսնողներին համակարգչով աշխատելու անհամեմատ մեծ հնարավորություններ :

Հանրակրթության գործընթացում հատկապես տարրական դասարաններում կարելի է լայնորեն կիրառել տիֆլոգրաֆիկական ալբոմները: Դրանց յուրաքանչյուր էջին շոշափական ռելիեֆով պատկերված է որևէ առարկա կամ պատկեր: Ուսումնասիրելով ուսումնական նյութը՝ երեխան հնարավորություն է ու-

նենում շոշափել այն, գրաֆիկական նկարի միջոցով ծանոթանալ պատկերի ռելիեֆին:

«Քանդակ-պատկերների» միջոցով իրականացվող ուսուցման շնորհիվ չտեսնող երեխան այն կարող է վերցնել ձեռքով, շոշափել բոլոր կողմերից, ուսումնասիրել նրա բոլոր մանրամասնությունները: Այս ամենը նպաստում է տրված նյութի մատչելի և ամբողջական ընկալմանը:

Շատ կարևոր է նաև այս երեխաների հետ նկարչությամբ զբաղվելը: Գրեթե միշտ տեսողության խանգարումներ ունեցող և հատկապես չտեսնող երեխաներն ունենում են պատկերացման խաթարումներ: Այսինքն, համոզված ենք, որ չտեսնող երեխան բազմիցս իր ձեռքում շոշափել է ծաղիկը, սակայն, երբ նրան խնդրում ենք նկարել այն, թղթի վրա նա ներկայացնում է բոլորովին այլ պատկեր: Մանկավարժի խնդիրն է երեխային օգնել թղթի վրա ճշգրիտ

կամ գրեթե ճշգրիտ շոշափական պարզ պատկերների գծման հարցում: Այդ նպատակով կարող ենք գործածել հատուկ մոմե տախտակներ, հաստ թղթեր, որոնց վրա գրչի բավարար ուժգնությամբ սեղմելու դեպքում հստակորեն կընդգծվեն անհրաժեշտ պատկերները և այլն: Մնացորդային տեսողություն ունեցող երեխաների հետ այս ամենը պետք է կատարել՝ գործածելով գունային հակադրությունը, վառ գույների կիրառումը:

Այսպիսով, անառարկելի է, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցումը մատչելի, հետաքրքիր ու արդյունավետ կդառնա, եթե գործածվեն վերը նշված տիֆլոտեխնիկական միջոցները: Անտարակույս, եթե ստեղծվեն նման պայմաններ ավելի մեծ թվով երեխաներ կընդգրկվեն ներառական կրթություն իրականացնող դպրոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Годовникова Л. В. Условия интегрированного образования детей с нарушениями развития // Педагогика. – 2008. – № 8. – С. 36–43.

2. Гудонис, В. П. Опыт и перспективы интегрированного обучения детей с нарушенным зрением // Дефектология. 1998. – № 2. – С. 75–81.

3. Малофеев, Н.Н., Шматко, Н.Д. Интеграция и специальные образовательные учреждения: необходимость перемен // Дефектология. – 2008. – № 2. – С. 86–93.

4. Малофеев Н.Н., Шматко Н.Д. Базовые модели интегрированного обучения // Дефектология. – 2008. – № 1. – С. 71–79.

5. Шведова Н.П. Рельефная наглядность для слепых. // Воспитание и обучение детей с нарушениями развития. – 2013. – №1. – С. 33–42.

6. <http://www.sisibol.ru/glazbol/92.shtml>

7. http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

РЕЗЮМЕ

К ПРОБЛЕМЕ ПРИМЕНЕНИЯ ТИФЛОТЕХНИКИ В СИСТЕМЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

Марутян М.К.

Доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Асатрян С.А.

Магистрант кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены роль и значение применения тифлотехнических средств в процессе учебной деятель-

ности в школах, осуществляющих инклюзивное образование.

SUMMARY

THE PROBLEM OF TYPHLOTECHNICS APPLICATION IN THE SYSTEM OF INCLUSIVE EDUCATION

Marutyan M.K.

Associate professor at Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedadodical Sciences

Asatryan S.A.

Second year MA student, Special education faculty of Khacatur Abovyan Armenian State Pedagogical University

The role and importance of application of typhlotechnical means in the process of academic activities in schools carrying out inclusive education.